



Saint Yeghiche Armenian Church Parish Սբ Եղիշէ Հայոց Եկեղեցւոյ Ծովի

Priest in Charge Rev Fr Nshan Alaverdyan
13b Cranley Gardens, Kensington London, SW7 3BB
Pastoral office t. +44 (0)20 7373 8133 email. info@styeghiche.org.uk
www.styeghiche.org.uk <https://www.facebook.com/StYeghiche>

ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԵՐԿԼԵՉՈՒ ԹԵՐԹԻԿ - SUNDAY BILINGUAL BULLETIN

1: Today's Scripture Reading,

9th March 2025

Bulletin 11/2025

Second Sunday of Great Lent—Expulsion

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԿՈՂՄԷ ՀՌՈՍԷԱՑԻՆԵՐԻՆ ԳՐՈՒԱԾ ՆԱՄԱԿԷՆ 12:1-13:10

Ապրիլ Աստուծոյ ծառայութեան մէջ

Ուստի, եղբայրներ, քանի Աստուած այնքան ողորմած եղաւ մեզի հանդէպ, կ'աղաչենք որ դուք ձեզ Աստուծոյ ընծայէք որպէս կենդանի գոհ մը՝ իրեն վերապահուած, որովհետեւ ասիկա՛ է Աստուծոյ ուզած հոգեւոր պաշտամունքը: Այս աշխարհի մարդոց վարմունքը մի՛ ընդօրինակէք, այլ նորոգուած միտքերով նոր մարդ եղէք, որպէսզի ձեր փորձառութեամբ ընտրէք լաւը, գիտնալով Աստուծոյ կամքը, այսինքն՝ ինչ որ բարի է, ընդունելի է իրեն եւ կատարեալ:

Ինձի տրուած Աստուծոյ շնորհքով հետեւեալ պատուերը կու տամ իւրաքանչիւրիդ.— Մեծամիտ մի՛ ըլլաք. ընդհակառակը, միշտ համեստ եղէք եւ միայն Աստուծմէ ձեզի տրուած հաւատքին չափով գնահատեցէք դուք ձեզ: Ինչպէս մեր մարմինը բազմաթիւ անդամներ ունի, որոնց պաշտօնը նոյնը չէ սակայն, այնպէս ալ Քրիստոսի միացած ըլլալով՝ մենք բոլորս մէկ մարմին ենք: Թէպէտ որպէս անդամներ իրարու կապուած ենք, բայց Աստուծոյ շնորհքը իւրաքանչիւրիստարբեր պարգեւ մը տուած է, որ պէտք է գործածենք: Եթէ մարգարէութեան պարգեւընկինք՝ պէտք է պատգամենք մեր հաւատքին համեմատ: Եթէ ծառայելու շնորհքը տրուած է՝ պէտք է ծառայենք: Եթէ ուսուցանելու ձիրքը ունինք՝ պէտք է ուսուցանենք: Եթէ յորդորելու կարողութիւնը ունինք՝ պէտք է յորդորենք: Իր ունեցածը ուրիշներուն բաժնողը առատօրէն թող բաշխէ: Վերակացու եղողը եռանդագին թող աշխատի: Ողորմութիւն ընողը խնդութեամբ թող ընէ:

Ձեր սէրը թող անկեղծ ըլլայ: Ատեցէք ինչ որ չար է եւ բարիին կառչած մնացէք: Եղբորպէս իրար սիրեցէք գորովանքով: Յարգելու մէջ իրար գերազանցեցէք: Եռանդագին աշխատեցէք առանց ծուլանալու: Ձերմեռանդ հոգիով Տիրոջ ծառայեցէք: Յոյսով ուրախացէք, նեղութեանց մէջ համբերող եղէք, յարատեւ աղօթեցէք: Կարիքի մէջ եղող եղբայրներուն օգնեցէք եւ միշտ հիւրասէր եղէք: Օրհնեցէք ձեզ հալածողները. մի՛ անիծէք, այլ օրհնեցէք: Ուրախացողներուն հետ ուրախացէք եւ լացողներուն հետ լացէք: Բոլորին հանդէպ նոյն վերաբերումը ունեցէք. մեծամիտ մի՛ ըլլաք, խոնարհ մարդոց ալ ընկերութիւն ընելու զիջեցէք, եւ դուք ձեզ իմաստուն մի՛ համարէք:

Ուեւ մէկուն չարիքին՝ չարիքով մի՛ հատուցանէք: Չանացէք ընել այն՝ ինչ որ բոլոր մարդոց աչքին բարի է: Որքան կրնաք՝ ամենուն հետ խաղաղ ապրեցէք: Սիրելիներ, երբեք դուք անձամբ վրէժ լուծելու մասին մի՛ մտածէք, այլ ձգեցէք որ Աստուծոյ բարկութիւնը ընէ ասիկա. որովհետեւ Տերը Սուրբ գիրքին մէջ կ'ըսէ. «Ի՛նչ է դատելու եւ պատժելու իրաւունքը. ե՛ս պիտի հատուցանեմ», իսկ ուրիշ տեղ մը կ'ըսէ.—

«Եթէ թշնամիդ քաղցած է՝ հաց տուր իրեն. եթէ ծարաւ է՝ ջուր տուր: Այսպէս վարուելովդ արդէն անօթըր զինք կ'այրէ»:

Our Aim;

St Yeghiche Armenian Church aims to be the church for the whole community; a place where those who have faith and those who yet to find it or renew it, can come together as a family of God's children; a place where all will be received with tolerance, understanding and friendship.

2: A short interpretation of the Scripture reading

Մի՛ պարտուիր չարէն, այլ՝ բարիով յաղթէ չարին:

Հնազանդի իշխանութեան

Ամենմարդ պէտք է հնազանդի պետական իշխանութեանց, որովհետեւ առանց Աստուծոյ թոյլտուութեան իշխանութիւն չի կրնար ըլլալ, եւ գոյութիւն ունեցող իշխանութիւնները Աստուծմէ կարգուած են: Ուստի, ով որ իշխանութեանց կը հակառակի՝ Աստուծոյ հրամանին է որ հակառակած կ'ըլլայ, եւ հակառակողները իրենք զիրենք դատապարտութեան տակ կը դնեն: Իշխողները վախ չեն պատճառեր բարիք գործողներուն, այլ միայն չարագործներուն: Դուն կ'ուզե՛ս իշխանութենէն չվախնալ: Բարի՛ք գործէ, եւ անկէ գովասանք կը լսես. որովհետեւ Աստուծոյ պաշտօնեան է անիկա, քու բարիքիդ համար կարգուած: Իսկ եթէ չար գործես՝ վախցի՛ր անկէ, որովհետեւ զուր տեղը չէ որ սուր կը կրէ. որպէս Աստուծոյ պաշտօնեայ՝ բարկութեամբ կը դատէ եւ կը պատժէ չարագործները: Ահա թէ ինչու՝ պէտք է իշխանութեանց հնազանդի. ո՛չ միայն պատիժէն զերծ մնալու, այլ մանաւանդ խիղճով հանգիստ ըլլալու համար: Ատոր համար է նաեւ, որ իշխանութեանց տուրք կը վճարէք, որպէսզի իբրեւ Աստուծոյ պաշտօնեաներ՝ շարունակեն իրենց այդ դերը կատարել: Հետեւաբար անոնցմէ իւրաքանչիւրին հանդէպ ձեր պարտաւորութիւնը կատարեցէք, տուրքը տալով անոր՝ որուն տուրք պէտք է տաք, մաքսը տալով անոր՝ որուն մաքս պէտք է տաք, հնազանդելով անոր՝ որուն հնազանդութիւն կը պարտիք եւ յարգելով ան՝ որուն յարգանք կը պարտիք:

Մեր իրարու հանդէպ

Ոեւէ մէկուն ոեւէ բանով պարտական մի՛ մնաք. միմիայն իրար սիրելու պարտաւորութիւնը ունեցէք, քանի որ իր ընկերը սիրողը կատարած կ'ըլլայ Աստուծոյ Օրէնքը: Որովհետեւ Աստուծոյ պատուիրանները, «Մի՛ շնար, մի՛ սպաններ, մի՛ գողնար, սուտ վկայութիւն մի՛ ըներ, մի՛ ցանկար» եւ միւս բոլորը, խտացած են սա միակ պատուիրանին մէջ. «Մի՛րէ՛ ընկերդ քու անձիդ պէս»: Ով որ իր ընկերը կը սիրէ, չարիք չ'ըներ անոր: Ուրեմն սիրել՝ կը նշանակէ Աստուծոյ Օրէնքը լման գործադրել:

[The Epistle of St Paul to the Romans Romans 12:1-13:10;](#)

A Living Sacrifice to God

Therefore I urge you, brothers, on account of God's mercy, to offer your bodies as living sacrifices, holy and pleasing to God, which is your spiritual service of worship.^a Do not be conformed to this world, but be transformed by the renewing of your mind. Then you will be able to test and approve what is the good, pleasing, and perfect will of God.

For by the grace given me I say to every one of you: Do not think of yourself more highly than you ought, but think of yourself with sober judgment, according to the measure of faith God has given you. Just as each of us has one body with many members, and not all members have the same function, so in Christ we who are many are one body, and each member belongs to one another.

We have different gifts according to the grace given us. If one's gift is prophecy, let him use it in proportion to his faith; if it is serving, let him serve; if it is teaching, let him teach; if it is encouraging, let him encourage; if it is giving, let him give generously; if it is leading, let him lead with diligence; if it is showing mercy, let him do it cheerfully.

Love, Zeal, Hope, Hospitality ([John 13:31-35](#); [1 John 3:11-24](#))

Love must be sincere. Detest what is evil; cling to what is good. Be devoted to one another in brotherly love. Outdo yourselves in honouring one another.

Do not let your zeal subside; keep your spiritual fervour, serving the Lord.

Be joyful in hope, patient in affliction, persistent in prayer.

Share with the saints who are in need. Practice hospitality.

Dear Parishioners and Armenian Community Members:

The Sunday collection plate circulating during Divine Liturgy is for all to contribute each Sunday in order to have a thriving church. Your donation, participation and support is vital, not only by attending the church but also with your time and financial contribution to our church. Please be generous in order for us to keep the doors open and provide all the services.

Forgiveness ([Matthew 18:21-35](#))

Bless those who persecute you. Bless and do not curse. Rejoice with those who rejoice; weep with those who weep. Live in harmony with one another. Do not be proud, but enjoy the company of the lowly. Do not be conceited.

Do not repay anyone evil for evil. Carefully consider what is right in the eyes of everybody. If it is possible on your part, live at peace with everyone.

Do not avenge yourselves, beloved, but leave room for God’s wrath. For it is written: “Vengeance is Mine; I will repay, says the Lord.”^b

On the contrary,

“If your enemy is hungry, feed him; if he is thirsty, give him a drink. For in so doing, you will heap burning coals on his head.”^c

Do not be overcome by evil, but overcome evil with good.

Submission to Authorities ([1 Peter 2:13-20](#))

Everyone must submit himself to the governing authorities, for there is no authority except that which is from God. The authorities that exist have been appointed by God. Consequently, whoever resists authority is opposing what God has set in place, and those who do so will bring judgment on themselves.

For rulers are not a terror to good conduct, but to bad. Do you want to be unafraid of the one in authority? Then do what is right, and you will have his approval. For he is God’s servant for your good. But if you do wrong, be afraid, for he does not carry the sword in vain. He is God’s servant, an agent of retribution to the wrongdoer.

Therefore it is necessary to submit to authority, not only to avoid punishment, but also as a matter of conscience. This is also why you pay taxes. For the authorities are God’s servants, who devote themselves to their work. Pay everyone what you owe him: taxes to whom taxes are due, revenue to whom revenue is due, respect to whom respect is due, honour to whom honour is due.

Love Fulfils the Law ([Leviticus 19:9-18](#))

Be indebted to no one, except to one another in love. For he who loves his neighbour has fulfilled the law. The commandments “Do not commit adultery,” “Do not murder,” “Do not steal,” “Do not covet,”^a and any other commandments, are summed up in this one decree: “Love your neighbour as yourself.”^b Love does no wrong to its neighbour. Therefore love is the fulfilment of the law.

ՅԻՍՈՒՄ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԲԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍԻ 5:17-48

Օրէնքի ճշմարիտ ուսուցումը

Մի՛ կարծէք թէ եկայ Մովսէսի Օրէնքը կամ մարգարէներու ուսուցումները ջնջելու. չեկայ ջնջելու, այլ ամբողջացնելու: Հաստատ գիտցէք, որ բոլոր Օրէնքն ու մարգարէութիւնները կէտ առ կէտ պիտի իրականանան՝ առանց բառ մը իսկ դուրս ձգելու, մինչեւ գայ այն օրը, երբ այս երկինքն ու երկիրը պիտի անցնին: Ով որ ամենափոքր պատուիրանն իսկ զանց ընէ եւ ուրիշներուն ալ այդպէս սորվեցնէ, երկինքի արքայութեան մէջ յետինը պիտի նկատուի: Իսկ ով որ գործադրէ պատուիրանները եւ ուսուցանէ, մեծ պիտի ըլլայ երկինքի արքայութեան մէջ: Կ’ըսեմ ձեզի, եթէ Աստուծոյ պատուիրաններուն նկատմամբ ձեր հաւատարմութիւնը Փարիսեցիներուն եւ Օրէնքի ուսուցիչներուն ունեցած հաւատարմութենէն աւելի չըլլայ՝ պիտի չմտնէք երկինքի արքայութիւնը:

Ուսուցում բարկութեան մասին (Ղկ 12.57-59)

Լսեր էք որ անցեալին ըսուած է. «Մի՛ սպաննէր, որովհետեւ ան որ կը սպաննէ՝ պիտի դատաւարտուի»: Իսկ եւ կ’ըսեմ ձեզի.– Ով որ առանց պատճառի իր եղբոր դէմ բարկանայ, դատարան պիտի յանձնուի: Ով որ իր եղբայրը յիմար կոչէ, Ատեան պիտի բերուի. եւ ով որ իր եղբայրը անմիտ կոչէ, դժոխքի կրակին պիտի դատաւարտուի: Եթէ զոհարանին վրայ ընծադ Աստուծոյ մատուցանելու ատեն յիշես որ եղբայրդ վշտացած է քեզմէ, ձգէ՛ ընծադ զոհարանին առջեւ, գնա նախ հաշտուէ՛ եղբորդ հետ եւ ա՛յլա եկուր եւ ընծադ Աստուծոյ մատուցանէ:

Երբ մէկը խնդիր ունի քեզի հետ եւ դատի կը կանչէ քեզ, սկիզբէն համաձայնութեան

Safeguarding and Health and Safety issues are taken seriously by Saint Yeghiche Armenian Church, copies of the policy document are available for view, for any related issues please report or contact members of the parish council.

Եկուր անոր հետ՝ դատարան չինկած, այլապես քեզ դատաւորին կը յանձնէ, դատաւորն ալ՝ ոստիկանին, եւ բանտ կը նետուիս: Վս տահ եղիր թէ բանտէն պիտի չելլես, մինչեւ որ տուգանքիդ վերջին դահեկանը չվճարես:

Ուսուցում շնութեան մասին (Մտ 18.8-9, Մր 9.42-47)

Լսեր էք որ ըսուած է. «Մի՛ շնար»: Իսկ ես կ'ըսեմ ձեզի, թէ ո՛վ որ ցանկութեամբ նայի ռեւէ կնոջ՝ արդէն իսկ իր սիրտին մէջ շնութիւն ըրած կ'ըլլայ անոր հետ:

Եթէ աջ աչքդ քեզ կը գայթակղեցնէ, հանէ եւ նետէ՛ գայն, որովհետեւ նախընտրելի է որ անդամներդ մէկը կորսնցնես, քան թէ ամբողջ մարմինով դժոխք նետուիս: Եթէ աջ ձեռքդ քեզ կը գայթակղեցնէ, կտրէ եւ նետէ՛ գայն, որովհետեւ նախընտրելի է որ անդամներդ մէկը կորսնցնես, քան թէ ամբողջ մարմինով դժոխք նետուիս:



Jesus Teaching

Ուսուցում ապահարգանի մասին (Մտ 19.7-9, Մր 10.4-12, Ղկ 16.18)

Ըսուած է նաեւ. «Ու՛ր որ իր կիներ կ'արձակէ, անոր արձակման թողութ թող տայ»: Իսկ ես կ'ըսեմ ձեզի.– Ան որ առանց պոռնկութեան պատճառի իր կիներ կ'արձակէ, ինք պատճառ կը դառնայ անոր շնութիւն ընելուն: Նոյնպէս, շնութիւն ըրած կ'ըլլայ ան՝ որ կ'ամուսնանայ արձակուած կնոջ հետ:

Ուսուցում երդումի մասին

Լսեր էք նաեւ որ անցեալին ըսուած է. «Երդմնագանց մի՛ ըլլար, այլ կատարէ ինչ որ երդուած էիր Տիրոջ»: Իսկ ես կ'ըսեմ ձեզի.– Բնաւ երդում մի՛ ընէք, ո՛չ երկինքի վրայ՝ որովհետեւ Աստուծոյ գահն է, ո՛չ երկրի վրայ՝ որովհետեւ անոր ոտքին պատուանդանն է, ո՛չ Երուսաղէմի վրայ՝ որովհետեւ Մեծ Թագաւորին՝ Աստուծոյ քաղաքն է, եւ ո՛չ ալ քու գիտող վրայ երդում ըրէ, որովհետեւ չես կրնար մագ մը իսկ ճերմկցնել կամ սեւցնել: Պարգապէս ձեր Այոն Այո թող ըլլայ եւ Ոչո՛ր Ոչ: Անկէ աւելին չարէն կու գայ:

Ուսուցում վրէժի մասին (Ղկ 6.29-30)

Լսեր էք որ ըսուած է. «Աչքի դէմ աչք պիտի հատուցանես եւ սկոռայի դէմ՝ սկոռայ»: Իսկ ես կ'ըսեմ ձեզի.– Մի՛ հակառակիր քեզի չարիք ընողին: Եթէ մէկը աջ երեսիդ ապտակ գարնէ՛ միւս երեսդ ալ դարձուր անոր: Եւ եթէ մէկը ուզէ քեզ դատի կանչել՝ շապիկդ առնելու համար, բանկոնդ ալ տուր անոր: Եթէ մէկը քեզ բռնադատէ մէկ մղոն միասին երթալ՝ իր բեռը շալկելու համար, անոր հետ երկու մղոն ալ գնա: Եթէ մէկը քեզմէ՛ բան մը խնդրէ՛ տուր, եւ եթէ մէկը քեզմէ՛ բան մը փոխ առնել ուզէ՛ երես մի՛ դարձներ:

Թշնամիները սիրել (Ղկ 6.27-28, 32-36)

Լսեր էք արդարեւ որ ըսուած է. «Միրէ՛ ընկերդ եւ ստէ՛ թշնամիդ»: Իսկ ես կ'ըսեմ ձեզի.– Միրեցէ՛ք ձեր թշնամիները, օրհնեցէ՛ք ձեզ անիծողները, բարիք ըրէք ձեզ ատողներուն եւ աղօթեցէ՛ք անոնց համար, որոնք ձեզ կը չարչարեն ու կը հալածեն: Այսպիսով դուք ձեր երկնաւոր Հօր գաւակները պիտի դառնաք, որովհետեւ ան իր արեւը կը ծագեցնէ թէ՛ չարերուն եւ թէ՛ բարիներուն վրայ եւ անձրեւ կը տեղացնէ թէ՛ արդարներուն եւ թէ՛ մեղաւորներուն վրայ: Եթէ միայն ձեզ սիրողները սիրէք, Աստուծմէ՛ ի՞նչ վարձատրութիւն կրնաք սպասել: Մաքսաւորներն ալ նոյնը չե՞ն ըներ: Նմանապէս, եթէ միայն ձեր ազգակիցներուն հետ բարեկամութիւն ընէք, հեթանոսներէն աւելի ի՞նչ ըրած կ'ըլլաք: Անոնք ալ նոյնը չե՞ն ըներ: Արդ, դուք կատարեալ եղէք, ինչպէս որ ձեր երկնաւոր Հայրը կատարեալ է:

The Holy Gospel of Jesus Christ according to Matthew 5 :17-48

The Fulfilment of the Law

Do not think that I have come to abolish the Law or the Prophets. I have not come to abolish them, but to fulfil them. For I tell you truly, until heaven and earth pass away, not a single jot, not a stroke of a pen, will disappear from the Law until everything is accomplished.

So then, whoever breaks one of the least of these commandments and teaches others to do likewise will be called least in the kingdom of heaven; but whoever practices and teaches them will be called great in the kingdom of heaven. For I tell you that unless your righteousness exceeds that of the scribes and Pharisees, you will never enter the kingdom of heaven.

Anger and Reconciliation (Luke 12:57-59)

You have heard that it was said to the ancients, ‘Do not murder’c and ‘Anyone who murders

will be subject to judgment.’ But I tell you that anyone who is angry with his brother^d will be subject to judgment. Again, anyone who says to his brother, ‘*Raca,*’^e will be subject to the Sanhedrin.^f But anyone who says, ‘*You fool!*’ will be subject to the fire of hell.^g

So if you are offering your gift at the altar and there remember that your brother has something against you, leave your gift there before the altar. First go and be reconciled to your brother; then come and offer your gift.

Reconcile quickly with your adversary, while you are still on the way to court. Otherwise, he may hand you over to the judge, and the judge may hand you over to the officer, and you may be thrown into prison. Truly I tell you, you will not get out until you have paid the last penny.^h

Adultery (*Leviticus 18:1–30*)

You have heard that it was said, ‘Do not commit adultery.’ⁱ But I tell you that anyone who looks at a woman to lust after her has already committed adultery with her in his heart. If your right eye causes you to sin, gouge it out and throw it away. It is better for you to lose one part of your body than for your whole body to be thrown into hell.^j And if your right hand causes you to sin, cut it off and throw it away. It is better for you to lose one part of your body than for your whole body to depart into hell.

Divorce (*Deuteronomy 24:1–5; Luke 16:18*)

It has also been said, ‘Whoever divorces his wife must give her a certificate of divorce.’^k But I tell you that anyone who divorces his wife, except for sexual immorality, brings adultery upon her.^l And he who marries a divorced woman commits adultery.

Oaths and Vows (*Numbers 30:1–16*)

Again, you have heard that it was said to the ancients, ‘Do not break your oath, but fulfil your vows to the Lord.’^m But I tell you not to swear at all: either by heaven, for it is God’s throne; or by the earth, for it is His footstool; or by Jerusalem, for it is the city of the great King. Nor should you swear by your head, for you cannot make a single hair white or black. Simply let your ‘Yes’ be ‘Yes,’ and your ‘No,’ ‘No.’ Anything more comes from the evil one.ⁿ

Love Your Enemies (*Leviticus 24:17–23; Luke 6:27–36*)

You have heard that it was said, ‘Eye for eye and tooth for tooth.’^o But I tell you not to resist an evil person. If someone slaps you on your right cheek, turn to him the other also; if someone wants to sue you and take your tunic, let him have your cloak as well; and if someone forces you to go one mile,^p go with him two miles.^q Give to the one who asks you, and do not turn away from the one who wants to borrow from you.

You have heard that it was said, ‘Love your neighbour’^r and ‘Hate your enemy.’ But I tell you, love your enemies and pray for those who persecute you,^s that you may be sons of your Father in heaven. He causes His sun to rise on the evil and the good, and sends rain on the righteous and the unrighteous. If you love those who love you, what reward will you get? Do not even tax collectors do the same? And if you greet only your brothers, what are you doing more than others? Do not even Gentiles do the same?

Be perfect, therefore, as your heavenly Father is perfect.

Սուրբ Թեոդորոս զորավարի հիշատակության օր

Սբ. Թեոդորոս զորավարը համաքրիստոնեական սուրբ է, որի հիշատակությունը Հայ Առաքելական եկեղեցին տոնում է Մեծ Պահքի առաջին շաբաթ օրը: Ըստ վարքագիրների՝ նա ծնվել էր Ամասիա քաղաքի Սարու գյուղում և ունեցել քրիստոնյա բարեպաշտ ծնողներ: 4-րդ դարի սկզբին, Դիոկղետիանոսի հալածանքների ժամանակ, ապացուցելու համար կուռքերի հնարովի եւ կեղծ լինելը, գիշերով հրի է մատնել հեթանոսական Ռեա չաստվածուհու մեհյանը: Այս արարքի համար բանտ է նետվել և մեծագույն չարչարանքներից հետո 306 թվականին նահատակվել՝ այրվելով կրակի վրա: Սբ. Թեոդորոս զորավարը հայտնի է նաև, որպես վիշապասպան, որ քաջությամբ ու հավատով հաղթել է հսկա վիշապի: Օտար եկեղեցիներում հայտնի է նաև «Դիռոն» անվամբ, որ հունարեն նշանակում է «նորեկ» զինվոր:



Commemoration of St. Theodoros the Captain

St. Theodoros the Captain is a Saint recognized by all traditional churches of Christendom. The Armenian Church commemorates this Saint on the first Saturday during the period of Great Lent.

According to hagiographers, St. Theodoros was born to God-fearing and pious parents in the village of Saroo, near the town of Amasia. He was a soldier in the Roman Army, and rose through the ranks, eventually becoming a Captain.

In the beginning of the fourth century, Rome was under the rule of the Emperor Diocletian. Instead of worshipping at the temple of the pagan goddess Rea, as he had been instructed to, St. Theodoros burns the temple to the ground, thus demonstrating that pagan idols were false. For this act, Diocletian imprisons St. Theodoros, and he suffers severe tortures. In the year 306 A.D., he is martyred by being set on fire.

St. Theodoros is also known as the “Slayer of the Dragon”, as he was said to have defeated a great and mighty dragon due to his courage and faith.

Արտաքսման կիրակի

Մեծ Պահքի երկրորդ կիրակին կոչվում է նաև Արտաքսման: Օրվա խորհրդի և անվան մասին Աստվածաշունչ մատյանի Ծննդոց Գրքում գրված է. «...Եվ արտաքսեց նրան Աստված Եդեմի պարտեզից, որպեսզի մշակի հողը, որից և ստեղծվել էր»: (Ծննդ. 3:23): Նախապատմությունը հետևյալն է. մարդն ունկնդիր լինելով Սատանայի խաբեբայական խոսքերին, պատվիրանազանց գտնվելով՝ համոտեսեց արգելված պտղից: Որպես պատիժ, մարդն իհարկե, անմիջապես չմահացավ, սակայն զրկվեց Աստծո կողմից շնորհված անմահությունից և անիծվեց: Այսուհետ, մարդն իր քրտինքով պետք է վաստակի օրվա հացը և կինը պետք է ցավով ու տառապանքով զավակ ունենա և վերջում էլ ասվեց նրան. «...հող էիր և հող կդառնաս» (Ծննդ.3.19):



Եկեղեցական հայրերն իմաստուն կերպով Քառասնորդաց Պահքի շրջանի կիրակիներն այնպես են դասավորել և այնպիսի անվանումներ ու խորհուրդներ տվել, որոնցով ի հայտ է գալիս մարդկության կյանքի ուղին՝ ծնունդ, մեղսագործություն, գոշում, ապաշխարանք: Սա ինքնին մարդուն խորհելու ևս մեկ առիթ է սեփական անձին անդրադառնալու, պահոց շրջանն արդյունավետ անցկացնելու համար:

Sunday of Expulsion

The second Sunday of the period of Great lent is called the Sunday of Expulsion. The basis of the mystery of and the name of the day can be found in the Holy Bible, the Book of Genesis: “So the Lord God sent him out of the Garden of Eden and made him cultivate the soil from which he had been formed” (Genesis 3:23). Prehistory is the following. The human being, listening to the deceitful words of Satan, disobeyed the divine commandments and ate the forbidden fruit, As punishment the human being, the human being, of course, didn’t die at once, but was deprived of the eternity granted by God and was cursed Since then man must work hard and sweat to make the soil produce enough food, and woman will have pain in giving birth to her offspring. And in end God said to the human being: “You were made from soil and you will become soil again” (Genesis 3:19).

The church Fathers have given the Sundays of the Period of great lent such names and mysteries which symbolize the mankind’s way of life – birth, sinning, regret and repentance. This should serve for the human being as an occasion for thinking of himself/herself and his/her lifer so that the period of great Lent should be fruitful and productive.

DAILY BIBLE READINGS FOR 2024 According to the Lectionary of the Armenian Apostolic Church

10 March	1 Samuel 1:1-23; Proverbs 1:1-33; Jeremiah 1:1-10
11 March	1 Samuel 1:23-2:26; Proverbs 2:1-3:10; Jeremiah 1:11-2:3
12 March	Exodus 2:11-22; Joel 2:1-11; Micah 4:1-7
13 March	1 Samuel 3:21-4:18; Proverbs 3:11-4:14; Jeremiah 2:31-3:16
14 March	Deuteronomy 7:11-8:1; Job 9:1-10:2; Isaiah 40:9-17
15 March	St. Cyril of Jerusalem Proverbs 11:2-11; Isaiah 61:3-7; 2 Timothy 4:1-8; John 10:11-16



St Yeghiche Armenian Church Parish Սբ Եղիշէ Հայոց Եկեղեցւոյ Ծուխ

Registered Charity No 1173403

St Yeghiche Armenian Church Parish Ltd, 13b Cranley Gardens, Kensington London SW7 3BB
t.+44 20 7373 8133 e. info@styeghiche.org.uk w. www.styeghiche.org.uk f. <https://www.facebook.com/StYeghiche>



Under the Auspices of HG Bishop Hovakim Manukyan

St Yeghiche Armenian Church ladies Guild invite you to

Annual Great Mid-Lent Luncheon and Pre Order

@
Diocesan Centre of The Armenian Church of the UK And Ireland,
107 Ealing Road, Brentford, TW8 OLF

On Wednesday 26th March 2025 starting at 1:00 -17:30

All Members of your family are welcomed

**Please book your table and
For more info please call**
Mrs Hranoush 07752 791870
Mrs Noushig 07938 952868
Mrs Khatoon 07892 946458
Mrs Anita 07852 645547

Donation £20.00
Children under 7, Free
Street Parking
after 12 noon free

For Pre-order menu
Lahmejun box of 2 £5.00
Michink Kata Large £8.00
Gloch (Klecha) large £10.00
Nazoug box of 12 £6.00

**Your attendance and supporting our Ladies for a wonderful and delicious Lenten dishes
will be Highly appreciated**



ՕՐԱՅՈՅՑ 2025 CALENDAR

ՍԲ ԵՂԻՇԷ ՀԱՅՈՑ
ԵԿԵՂԵՑՈՅ
ԾՈՒԽ

ST YEGHICHE
ARMENIAN CHURCH
PARISH

13b Cranley Gardens
Kensington London
SW7 3BB, UK

Tel: +44 20 7373 8133
Email: info@styeghiche.org.uk
Web: www.styeghiche.org.uk
f [facebook.com/styeghiche](https://www.facebook.com/styeghiche)

Registered Charity No. 117340

Dear Parishioners and Armenian Community Members

The St Yeghiche Armenian Church's 2025
year calendar is out, with both Armenian
Religious Feast dates and UK holiday dates.

These are available at St Yeghiche Armenian
Church front desk,
from Sunday 1st December 2024,
and till the stock last.

These are great gift idea for New Year
To give to your friends and relatives.

We encourage every Armenian Household to
have one, and bring our Lords blessing to
your home and Family.

Thank you for your generous support
**St Yeghiche Armenian Church Parish
Council**

3: This week's message from our Priest in Charge

Մեկնություն եւ հոգևոր պատգամ Աւետարանի այս օրուայ ընթերցուածից.

Յանուն Հօր եւ Որդոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:

«Տէրն է մեր դատաւորը, Տէրն է մեր իշխանը, Տէրն է մեր թագաւորը, Տէրն է մեր փրկիչը, Նա է փրկելու մեզ» (Ես. 22-33):

Աստծուն զաւակացած եղբայրներ եւ քոյրեր,

Մեծ Պահքի ապաշխարութեան շրջանի մէջ ենք, ընդհանրական հոգևոր խոկումի եւ միաժամանակ առանձնական, անհատական ինքնաքննութեան մէջ: Նախորդ կիրակիի՝ դրախտի ուրախութեան յիշեցումից յետոյ այս կիրակին մեզ ակնարկն է տալիս մարդու անկումի, Աստծոյ դէմ ելնելու եւ դրախտից դուրս դրուելու: Այս պատճառով խորհրդանշական **ԱՐՏԱՔՍՍԱՆ ԿԻՐԱԿԻ** անունն է կրում:

Կեանքում շատ են այնպիսի միջադէպերը, երբ կորցնելուց յետոյ է գնահատում, ամբողջապէս արժեւորում այն, ինչ մեր ձեռքում ունէինք: "Դրախտ կորուսեալ"-ը մեզ համար այդքան զգալի ու ցաւալի չէ, որքան դա իրէնց աչքերով տեսած առաջին մարդկանց համար: Աղամի եւ Եւայի մէջ խտանում է ամբողջ մարդութիւնը: Մենք եւս մեր դրախտներն ենք կորցնում՝ ակամայ մեր հարազատութիւնը ցոյց տալով նախաձեռնողներին: Ուրեմն, միայն իրենք չեն արտաքսուած, այլ մենք եւս: Շատերն են մեղադրում Եւային կամ Աղամին, թէ ինչու հնազանդ չեղան Աստծուն եւ կորցրին դրախտը, բայց մենք եւս ամէն օր մեր փոքր կամ մեծ անհնազանդութեամբ կորցնում ենք մեր փոքր կամ մեծ, ներքին ու արտաքին "դրախտները":

Յետեւաբար, Արտաքսման կիրակիից եկեղ պատգամը մեր անցեալի վերաքննումն է՝ առանց մեղադրելու այլոց. ո՛չ Աստծուն, որ մեր մտածելով ինչ-որ բան կարծես սխալ է արել եւ ո՛չ էլ մեր աչքին օձի դերում մեղադրուող այլ մարդկանց: Անցեալի վերաքննումն է՝ ըստ մեր ապրածի, ըստ մեր իսկ ազատ կամքով զիտակցաբար արուած ընտրութիւնների: Ինքնաքննութեամբ է նուաճում ինքնաճանաչման ներքին ամբողջը: Ինքն իրեն չը կեղծող, ազնիւ կերպով քննող մարդը խոստովանում է, որ սխալներ ու մեղքեր ունի, որ յաճախ իրեն ոչ թէ արտաքսել են, այլ ինքն է կամաւորաբար հեռացել: Իսկ այս մտածումը ծնում է ափսոսանք, զոջում եւ վերադարձի ցանկութիւն:

Ինքերս մեզ անկեղծօրէն խոստովանենք, որ մենք աւելի լաւը չենք, քան դրախտաբնականները, որ մենք էլ ենք այս պահին տառապում մեր իսկ գործած սխալների եւ մեղքերի արդիւնքում: Մենք պէտք է խոստովանենք, որ հոգով հիւանդ ենք եւ ապրում ենք մեզպէսներից կազմուած հասարակութեան մէջ, որ հոգևորապէս նոյնպէս խոցուած, խեղուած ու հիւանդ է: Վկան՝ սպանութիւնների եւ ինքնասպանութիւնների ահագնացող թիւը, նաւթի ու դրամի համար պատերազմներում գնդակներից, թունաւոր նիւթերից ու սովից մահացած մանուկները, մահից մազապուրծ փախստականները: Ամէն հասարակութիւն հիւանդ է իւրովի, ամէն մէկն իր ականջներին շնջացող ի՛ր օձն ունի: Իսկ օձը խօսում է իւրաքանչիւրի թաքուն ցանկութիւնների, ծուռ ու մոլար կրքերի մասին: Նայենք իրէնց առաջադէմ կոչող այսօրուայ հասարակութիւններին. կերուած են բոլոր "արգելուած պտուղները", չը կայ այլեւս մի անկիւն, որ անձեռնմխելի է, սրբազան, երկիւղալի, վեհ, ոտնամաններն առջեւը հանելու չափ սուրբ....

Մենք Աստծուն Տէր եւ Հայր ենք կոչում, բայց հարցը դրանով չի փակւում. *«Որդին փառաւորում է Հօրը, եւ ծառան երկնչում է իր Տիրոջից: Իսկ արդ, եթէ ես Հայր եմ, ո՞ր է իմ փառքը, իսկ եթէ Տէր եմ, ո՞ր է իմ պատիւը, - ասում է Ամենակալ Տէրը» (Մատթ. 1.6):*

Արտաքսման կիրակիի մտածումով՝ մեր հոգին հարսանիքը կիսատ թողած հարսի նման է: Եւ կրկնակի կարելոր է դառնում այն խոկումը, որ այն, ինչի համար թողեցինք մեր դրախտները, ժամանակաւոր հաճոյքների պէս են: Ըստ այդմ՝ նոր հրապուրիչ օձային առաջարկներից հրաժարուելու եւ վերադարձի կամք պէտք է ունենանք. *«աշխարհն անցնում է, իսկ ով կատարում է Աստծոյ կամքը, մնում է հաւիտեան» (Ա.Յովհ. 2.17):*

Իսկ ո՞րն է Աստծոյ կամքը. *«Այս է իմ Հօր կամքը. ամէն ոք, ով տեսնի Որդուն եւ հաւատայ նրան, ունենայ յաւիտեանական կեանք. եւ ես նրան վերջին օրը յարութիւն առնել տամ» (Յովհ. 6.40):* Աստծոյ կամքը մեր որդիութիւնն է Իրէն, Իր Որդուն նմանութիւնն ունենալն ու Փրկչի ետեւից քայլելն է, ինչպէս Քրիստոս իսկ ասում է. *«Լսել էք արդարեւ, թէ ինչ ասուեց. "Պիտի սիրես ընկերոջդ եւ պիտի ստես քո թշնամուն": Իսկ ես ձեզ ասում եմ. սիրեցէ՛ք ձեր թշնամիներին, օրհնեցէ՛ք ձեզ անիծողներին, բարութիւն արէ՛ք ձեզ ատողներին եւ սոթթեցէ՛ք նրանց համար, որ չարչարում են ձեզ եւ հալածում, որպէսզի որդիներդ լինէ՛ք ձեր Հօր, որ երկնքում է.» (Մատթ. 6.43-45):*

Այօրուայ շարականը գեղեցիկ կերպով ամփոփում է այս կիրակիի խոկումը՝ մեզ կոչ անելով. *"Կեանքի դրախտից ելնելու համար Աղամի տրտմութեան հետ մենք էլ ընդունենք ապաշխարութեան տրտմութիւնը, որպէսզի Քրիստոսի յարութեամբ արժանանանք մտնել Եկեղեցու դրախտը":*

Տէր Յիսուս Քրիստոսի շնորհը, Աստծու սէրը եւ Սուրբ Հոգու հաղորդութիւնը ձեզ հետ լինեն: Ամէն:

Սբ Եղիշէի Հոգևոր Հովիւ Տէր Նշան Քահանայ Ալավերդեան

Prayer Services During The Great Lent

Monday, 4th March, was the beginning of Great Lent, a period which lasts 40 days. The Armenian Church defines the period of Great Lent as a time of abstinence and repentance for the faithful. It is a profound and unique period of spiritual experience.

Liturgical celebrations on Sundays: There are services every Sunday starting at 11:00 am at St Yeghiche Armenian Church. The faithful are welcome.

Morning Service on Wednesdays: There are Morning service (Առաւօտեան ժամերգութիւն (Արեւազայ)) every Wednesday, starting from 5th March and during the Great lent period at St. Sarkis Church (W8 6TP) starting at 11:00 am

Vigils on Friday evenings: There are vigils every Friday evening at St. Sarkis Church during the Great Lent period starting at 6:30 pm.
The faithful are welcome.

Announcement

Dear St Yeghiche Parish Registered Members,

We are pleased to inform you that our Annual Parish General Assembly meeting (AGM) will take place on Sunday 9th March 2025 at St Yeghiche Armenian Church at 1:00pm.

As stated in our constitution all registered members are encouraged and should participate at this Annual Parish Assembly meeting provided they have paid their Parish Contribution for the year and up to 2024.

Your attendance is extremely important to evaluate and support your Parish and its council who have collectively volunteered to run the activities at the church and within your Parish.

We look forward seeing you

St Yeghiche Armenian Church Parish Council

«Տէ՛ր, եթէ իմ շրթներս բանաս՝ բերանս քու օրհնութիւնդ պէտի երգէ:
Օրհնեա՛լ ըլլայ համագոյ եւ միասնական, անբաժանելի Սուրբ
Երրորդութիւնը՝ Հայրը, Որդին եւ Սուրբ Հոգին,
այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից: Ամէն:

WALKING THE STRAIGHT PATH OF FAITH

I heard about two boys who were playing in the snow. They decided to have a little competition to see who could walk the straightest line. One boy kept stopping, turning back to check his path. But the other boy never looked back. He locked his gaze on a tree in the distance and walked straight toward it. When they reached the end, the first boy's line was perfectly straight. The second boy's path was all over the place. He asked, "How did you do that?" His friend said, "I didn't look back. I kept my eyes on the tree."

That's a picture of how we are to walk in faith. Some people start out strong, but along the way, they get distracted. They start looking back at past mistakes, past hurts, and past regrets. They keep questioning, "Am I on the right path? Did I make the right decisions?"

Saint Paul says in Hebrews 12:1-2, "Let us lay aside every weight and the sin that clings so closely, and let us run with perseverance the race that is set before us, looking to Jesus, the pioneer and perfecter of faith." That means no looking back at yesterday's failures. No second-guessing what God has already forgiven. No getting distracted by what's going on to the left or the right. You've got to stay focused!

The journey may be filled with challenges and uncertainties. You may be in a season where things aren't clear, where the snow is deep, and the path seems uncertain. The enemy would love for you to get distracted, to turn back, and to doubt yourself. But remember, God has already marked out the course for you! He's already gone before you and made a way.

Friends, stay the course! Let go of the distractions, release the regrets, and step forward in faith, not by sight. Keep your eyes on Jesus! When we fix our focus on Him, our steps become sure, and we find our path straight and true, guided by the light of faith and warmed by His everlasting love.

Bishop Mesrop Parsamyan

March 5, 2025

Մեծ Պահք՝ Հաւատքի Վերանորոգման եւ Հոգեւոր Աճի Ժամանակաշրջան:

Միրելի Հաւատացեալներ,

Մեծ Պահքի շրջանը մեզ կը հրաւիրէ ապաշխարութեան, վերանորոգման եւ պատրաստութեան՝ մեր Տէր եւ Փրկիչին յաղթական Սուրբ Յարութեան՝ այսինքն Սուրբ Չատկի տօնին:

Պահքը առիթ մըն է, ուր մեր կապը կը խորացնենք Աստուծոյ հետ, կը քննենք մեր կեանքը եւ կը վերահաստատենք մեր հաւատքը՝ աղօթքով, ծոմապահութեամբ, հոգեւոր ուսումով եւ բարեսիրական գործերով:

Կը հրաւիրենք ձեզի մասնակցելու Մեծ Պահքի շրջանի միասնական աղօթքներու, որոնք կը սկսին՝

- Չորեքշաբթի, Մարտ 5 – Առաւօտեան ժամը 11:00, Սուրբ Սարգիս Եկեղեցի (W8 6TP)
- Առաւօտեան ժամերգութիւն (Արեւագալ)
- Ուրբաթ, Մարտ 7 – Երեկոյեան ժամը 6:30, Սուրբ Սարգիս Եկեղեցի (W8 6TP)
- Ուրբաթ երեկոյեան աղօթքներ եւ Ս. Ներսէս Ծնորհալիի աղօթքներ (Խաղաղական եւ Հանգստեան ժամերգութիւններ)

Նշուած ժամերգութիւնները պիտի շարունակուին ամբողջ Մեծ Պահքի շրջանին, հասնելով իրենց գագաթնակէտին Աւագ Ծաբթուան ընթացքին:

Մեր Պահոց Ծանապարհորդութեան Չորս Միւները

1. **Աղօթք** – Աստուծոյ Հետ Մեր Միութիւնը Չօրացնել

Մեծ Պահքը առիթ մըն է մեր սիրտերը դէպի Աստուծոյ ուղղելու՝ ասելի խոր աղօթքով: Կը քաջալերենք, որ մասնակցիք Մեծ Պահքի յատուկ աղօթքներուն, թէ՛ միասնական թէ՛ առանձնական: Պատրաստուած է Մեծ Պահքի Աղօթագիրք, որուն մէջ պիտի ըլլան ամենօրեայ աղօթքներ, Սուրբ Գրոց ընթերցումներ եւ հոգեւոր խորհրդածութիւններ, որոնք պիտի ուղեկցին ձեզ այս սուրբ շրջանին ընթացքին:

2. **Ծոմապահութիւն** – Հոգեւոր Վարժութիւն

Հայ Եկեղեցւոյ մէջ ծոմապահութիւնը միայն ուտելիքէ հեռանալ չէ, այլ Աստուծոյ համար մեր կեանքին մէջ ասելի շատ տեղ տրամադրելը: Երբ մեր ուշադրութիւնը կը հեռացնենք անօգուտ զբաղումներէ եւ ունայն վայելքներէ, մեր հոգեւոր աճին, խոնարհութեան եւ Զրիստոսի վրայ մեր ապաւինութեան կեդրոնանալու նոր առիթներ կը ստանանք:

3. **Ուսում** – Հաւատքը Խորացնել

Կը հրաւիրենք ձեզի մասնակցելու Մեծ Պահքի Աստուածաշնչի Ուսումնասիրութեան դասընթացքներուն, որոնք տեղի պիտի ունենան ամեն Չորեքշաբթի, երեկոյեան ժամը 7:30, ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ՄԷՋ (107 Ealing Road, TW8 0LF): Միասին պիտի խորհրդածենք պահքի Աւետարանական ընթերցումներուն շուրջ, կը խոկանք ապաշխարութեան եւ վերանորոգման իմաստին վրայ եւ կը սերտենք Հայ Եկեղեցւոյ Հայրերու գիրքերը, ներառեալ Ս. Գրիգոր Նարեկացիի աղօթքները, որոնք կը գտնուին Մեծ Պահքի Աղօթագիրքին մէջ:

4. **Քարեգործութիւն** – Գթութեան եւ Ծառայութեան Ծրջան

Մեծ Պահքը նաեւ բարեգործութեան, խոնարհութեան եւ գթութեան շրջան մըն է: Զրիստոսի զոհարերութեան մասին խորհրդածելով՝ եկէ՛ք մեր սերը եւ օժանդակութիւնը տարածենք կարօտեալներուն, բարեսիրական նուիրատուութիւններով, նեղեալներուն օգնելով եւ մեր համայնքին ծառայելով:

Հայ Եկեղեցւոյ Մեծ Պահքի Եօթը Կիրակիները

Հայ Եկեղեցւոյ մէջ Մեծ Պահքի իւրաքանչիւր Կիրակի յատուկ հոգեւոր խորհուրդ ունի, որ կը առաջնորդէ մեզ ապաշխարութեան, վերանորոգման եւ Սուրբ Չատկին պատրաստուելու ճանապարհին:

1. **Մեծ Պահքի Նախօրեակ (Բուն Բարեկենդան)** – Ուրախութեան օր՝ նախքան պահքի սկիզբը
2. **Արտաքսման Կիրակի** – Ադամի եւ Եւայի դրախտէն վտարման յիշատակը՝ մեղքին հետեւանքները խորհրդածելու համար
3. **Անառակ Որդիի Կիրակի** – Ապաշխարութեան եւ Աստուծոյ ողորմութեան գիրկը վերադառնալու կոչ

3. **Տնտեսի Կիրակի** – Մտածել, թե որքան հաւատարիմ տնտես ենք Աստուծոյ պարգեւներուն
 4. **Դատարի Կիրակի** – Աստուծոյ արդարութեան եւ մեր պարտականութեան մասին խորհրդածելու առիթ
 5. **Գալուստի Կիրակի** (Երկրորդ Գալուստ) – Մեր սրտերը Քրիստոսի երկրորդ գալուստին պատրաստելու օր
 6. **Ճրագալոյց Կիրակի (Ծաղկագարդ)** – Քրիստոսի Երուսաղէմ մուտքին յիշատակը, որուն կը յաջորդէ Աւագ Շաբթուան սկիզբը
- Այս խորհուրդներով կը պատրաստենք մեր սիրտերը Չատկի՝ յաղթանակին տօնին, որ կը յայտարարէ կեանքին յաղթանակը մահուան վրայ:

Յատուկ Պաշտօններ եւ Միջոցառումներ

- Ամէն Չորեքշաբթի առաւօտ, սկսեալ Մարտ 5-էն – Առաւօտեան Ժամերգութիւն (Արեւագալ)
- Չորեքշաբթի Աստուածաշնչի Ուսումնասիրութիւն՝ երեկոյեան ժամը 7:30, Առաջնորդարանի Մէջ
- Մեծ Պահքի Պաշտօններ՝ Ամէն Ուրբաթ Երեկոյեան (Խաղաղական եւ Հանգստեան Ժամերգութիւններ)
- Աւագ Շաբթուան Պաշտօններ՝ Մանրամասնութիւնները պիտի յայտարարուին

Թող Մեծ Պահքը ըլլայ շնորհքի, վերանորոգման եւ հոգեւոր անի շրջան իւրաքանչիւրիս համար: Եկէ՛ք միասին հաւատքով ընթանանք այս ճանապարհին, Աստուծոյ ներկայութիւնը որոնելով բաց սրտով:

Աղօթքներով եւ օրհնութեամբ,

Տ. Յովակիմ Եպիսկոպոս Մանուկեան

Միացեալ Թագաւորութեան եւ Իրլանդայի Հայոց Թեմ:

Verse of The Day

“From the rising of the sun to the place where it sets,
the name of the LORD is to be praised.”

Psalm 113:3

2025 Lenten Calendar for Families

Dear Parishioners and Armenian Community Members,


We are pleased to inform you that we have prepared Great Lent Calendar 2025 for children, where you can read, follow and share the daily messages of the 40 days with your kids. There is also colouring section for them to enjoy.

For your free copy or electronic version please ask at the church desk.

Lets make The Great Lent teaching to our kids filled with fun.

Thank You

St Yeghiche Armenian Church Parish Council



4: Հոգեհանգիստ - Memorial Service

Rest of the soul service at St Yeghiche Armenian Church is requested:

By The Armenakian Sisters, Arpik, Araxi, Eliz, Nyree and their extended families for the soul of their sister who was also a loving Aunt, the late **ARMIG ARMENAKIAN** on her 40th day memorial of her passing, also for their Parents the late **ISHKHAN** and **HAYGANOUSH ARMENAKIAN**, also for all the old and new deceased members of **ARMENAKIAN, SERIDARIAN, BERBERIAN,** and **TYLER** Families.

By Mrs Hourie Agob for the soul of her Husband the late **Dr ARSHAVIR AGOB (Տոբ ԱՐՇԱՎԻՐ ԱԳՈԲ)**, and for all the old and new deceased members of the **AGOB** and **HALADJIAN** Families.

May the Lord rest the souls of the deceased members of our community in peace and console their loved ones with the comforting power of His Holy Spirit.

Please Pray For Our Sick: Please notify the Pastor whenever you know of anyone who is sick, whether at home or in the hospital. Let us pray for one another

General

St Yeghiche Armenian Church is here to cater for all of your spiritual needs
Baptisms, Weddings, Baby Blessings, Home/Workplace Blessings, Seniors' Visitation, Hospitals/Home Visitation/Prayer, Funeral Service, Requiem, Grave Site Prayers, and more..

Please contact members of the Parish Council at Church every Sunday to request any of the above services. Alternatively, call Tel: 020 73738133 office, or write to Email: serices@styeghiche.org.uk

Rev Fr Nshan Alaverdyan is available to visit parishioners in the hospital, nursing homes, or home visitations. He is also available to conduct Home Blessings, administering Holy Communion, consultations and other sacramental needs. Please call the church office at 020 7373 8133 or Fr Nshan on 07548 777 147.

Hokehankist Requests: To request a requiem service and include details in our Sunday Bulletin, please contact us **before Thursday Evening**. Please contact Mr Viken Haladjian, or approach a member of Parish Council at church every Sunday after Badarak.

Tel: 020 7373 8133 office, 07970 146 280 mobile Email: services@styeghiche.org.uk

In Liu of Flowers: Friends and family of the deceased can make donations, in memory of their loved ones, to St. Yeghiche Armenian Church General Operating Fund.

Donations for prayers and annual membership contributions, in support of church's annual expenses, are welcome. Donations can be made;

- By a cheque made payable to "St Yeghiche Armenian Church Parish",
- By electronic bank transfer to "St Yeghiche Armenian Church Parish Ltd"
HSBC, Acc.no: 42674432, Sort code: 40-02-26
- By electronic card reader at the Church entrance.
- By QR Code directly to the Church PayPal or SumUp accounts.



St Yeghiche Armenian Church is a UK Registered Charity, Reg No 1173403.

Please complete a Gift Aid Form with your donation. Forms are available from Parish Council.

Membership: St Yeghiche Armenian Church Parish Council would like to invite members of the Armenian community to become registered members and take part in Parish activities. Become a dues paying member and let your voice be heard, be eligible to vote and be elected to one of Parish offices. Please contact a member of the Parish Council at the entrance desk of the Church or visit our website www.styeghiche.org.uk